

<https://doi.org/10.46991/hc.2025.si1.332>

Tonir in the Armenian oral culture

Siranuysh Arakelyan

<https://orcid.org/0009-0008-0236-9019>

NAS RA Institute of Archeology and Ethnography of Researcher
nrane3@yahoo.com

Keywords - *tonir, sacred space, oral tradition, ritual, fire, water, ashes, beliefs.*

The tonir (hearth) in Armenian culture is deeply linked to the worship of fire and ancestors, leaving its mark on folklore, beliefs, festivals, and customs. It was not merely a household object but also held a multifunctional, sacred role, serving the religious needs of the family and community. In some villages, certain tonirs even acquired the significance of sacred places. The functions of the tonir ranged from baking bread to performing wedding and baptism rituals, healing to protection from evil, divination to transformation, wishes and vows, and as a pilgrimage site. The Armenians regarded it as the sanctified place of the home, based on the belief that the spirits of family ancestors lived within the tonir's flame or at its edge. In villages without churches, the tonir even "substituted" for a Christian temple, where baptisms and weddings took place.

In Armenian oral culture, legends, tales, and riddles have developed around the tonir, and it has been mentioned in traditional wedding songs as well. In almost every region of the Armenian Highlands, people swore "by the sacred tonir"—a trusted oath that encouraged others to believe in the truthfulness of the swearer's words.

Թոնիրը հայոց բանավոր մշակույթում

Սիրանույշ Առաքելյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, գիտաշխատող

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 332-340.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 15.11.2024

Revised: 10.02.2025

Accepted: 23.04.2025

© The Author(s) 2025

Հիմնաբառեր - թոնիր, սրբազան տարածք, բանավոր ավանդություն, ծես, կրակ, ջուր, մոխիր, հավատալիքներ:

Թոնիրը (օջախը) հայոց մեջ սերտորեն կապված է կրակի և նախնիների պաշտամունքի հետ, որն իր հետքն է թողել ժողովրդական բանահյուսության մեջ, հավատալիքային և տոնածիսական համակարգերում ու սովորույթներում: Այն սոսկ կենցաղային բնույթ չի կրել հայ մարդու առօրյայում. ունենալով բազմագործառնության բնույթ՝ նաև սրբազնացվել է՝ ծառայելով ընտանիքի և համայնքի կրոնածիսական կարիքներին, իսկ գյուղերում որոշ թոնիրներ ձեռք են բերել նաև սրբազան վայրի նշանակություն: Թոնրի գործառնությունը ձգվում են հաց թխելուց մինչև պսակ ու կնունք, բժշկելուց մինչև չարխափանություն ու չարահալածություն, գուշակությունից մինչև կերպափոխում, մուրազատվություն և ուխտագնացության սրբազան վայր: Հայր այն համարել է տան սրաքավայր՝ ըստ կենցաղավարող այն հավատալիքի, թե ընտանիքի նախնիների հոգիներն ապրում են թոնրի ակի մեջ կամ շուրթին: Եկեղեցի չունեցող գյուղերում թոնիրը «փոխարինել» է քրիստոնեական տաճարին, որի վրա կատարվել են և՛ կնունքներ, և՛ պսակադրություններ:

Հայոց բանավոր մշակույթում թոնրի շուրջ ձևավորվել են ավանդազրույցներ, զրույցներ, հանելուկներ, այն հիշատակել են նաև հարսանեկան ծիսական երգերում:

Հայկական Լեոնաշխարհի գրեթե բոլոր ազգագրական շրջաններում երգվել են «տաճար թունդիրով». այն վստահելի երդում էր, որը դիմացինին ստիպում էր հավատալ երդվողի խոսքի ճշմարտացիությանը:

Тонир в армянской устной культуре

Сирануйш Аракелян

НАН РА институт археологии и этнографии, исследователь

Ключевые слова - тонир, священное пространство, устная традиция, ритуал, огонь, вода, пепел, верования.

Тонир (очаг) в армянской культуре тесно связан с поклонением огню и предкам, оставив свой след в фольклоре, верованиях, обрядах и обычаях. Он был не просто бытовым предметом, но также имел многофункциональную и священную роль, служа религиозным

нуждам семьи и общины. В некоторых деревнях определенные тониры приобрели значение священных мест. Функции тонира простирались от выпекания хлеба до проведения свадебных и крещальных обрядов, исцеления до защиты от зла, гадания до преобразования, исполнения желаний, клятв и паломничества. Армяне считали его священным местом дома, основываясь на вере, что духи предков семьи живут в пламени тонира или на его краю. В деревнях, где не было церквей, тонир «заменял» христианский храм, где проводились крещения и венчания.

В армянской устной культуре вокруг тонира сложились легенды, сказания и загадки; он также упоминается в традиционных свадебных песнях. Почти во всех регионах Армянского нагорья люди клялись «священным тониром» - это была надежная клятва, внушавшая доверие к правдивости слов клянущегося.

* * *

Մուտք: Տարածքի սրբազան լինելու կարևոր հանգամանք է կրոնածիսական միջավայրի ապահովումն ու վավերացումը՝ որպես պաշտամունքային սրբավայրի: Հայկական միջավայրում թոնրին են վերագրվել ընտանիքի, տոհմի պաշտպանի ու պահապանի դերը. «Տան սրբավայրը թոնիրն է: Այն եկեղեցուն հավասար է դասվում, երբեմն այդպես էլ կոչվում է: Թոնիրը շինելուց հետո կանչում են քահանային՝ թոնիրն օրհնելու: Օջախի պաշտամունքը կապված է տան կրակի պաշտամունքի, բայց և նախնիների պաշտամունքի հետ» [Աբեղյան, 1975, 59]: Թոնրի վերոնշյալ օրհնության և մաքրագործման կարգի հիշատակությունն ու նկարագրությունը գտնում ենք ձեռագրերում [ՄՄ, 5823, թ. 171Բ-176Բ]¹:

Հայոց մեջ սրբազան է համարվել ոչ միայն թոնիրը, այլև նրանում գտնվող մոխիրը [Ալիշան, 2002, 30-31], որը Հայոց եկեղեցում գործածել են մաքրագործման ծեսի մեջ. կարծես թե մոխրի նկատմամբ հնադարից եկող ազգային պատկերացումներն [Ալիշան, 2002, 31] ուրույն կերպով վերարտադրվել են քրիստոնեական արարողակարգի մեջ [ՄՄ, 973, թ. 265 Բ]², որի արձագանքը բանահյուսության մեջ եկեղեցու թոնիրների փոշեհան կամ մոխրահան դևի մասին պահպանվող ավանդազրույցներն են [Քնար մշեցուց և վանեցուց, 1874, 7; Ղանալանյան, 1969, 246-247 (666 – Ա, Բ); 253-254 (679)]:

Սույն ուսումնասիրության *նպատակն ու խնդիրն* է ներկայացնել գրեթե չուսումնասիրված հայ ազգային մշակութային միավորի՝ թոնրի (օջախի), և նրա շուրջ ավանդականորեն ձևավորված կրոնաառասպելաբանական մտածողության և հավատալիքային շերտերը, առանձնահատկությունները, առկա բանահյուսական նյութը՝ գուգահեռելով հնագիտական և ազգագրական հարուստ նյութի հետ՝ հնարավոր չափով ամբողջացնելու համար այս կարևոր մշակութային տեքստի նկարագիրը:

¹ «... և ապա խառնեա զջուրն և զաղն յիրար և խաչանման լուայ զթոնիր շրթամբք և զխուփն»:

² «... ւարինուի որպէս գրեալ է. նախ խառնմամբ ջրոյն ընդ զինի եւ ընդ մոխիրն լուանան եւ ապա օծէն սր. իւղովն եւ զկնի մեռնան...»:

Թեմայի *արդիականությունը* պայմանավորված է նրանով, որ թոնրի մասին եղած ազգագրական ու բանահյուսական նյութերը սփռված են տարբեր հանդեսներում ու ժողովածուներում առկա Հայկական Լեոնաշխարհի ազգագրական շրջանների մշակութային նկարագրություններում, սակայն այն համահավաք կերպով ներկայացված և դասակարգված չէ, ինչը հնարավոր չափով փորձել ենք անել սույն հետազոտության մեջ: Ի նկատի ենք ունեցել նաև Հայաստանում զբոսաշրջության զարգացման ծիրում թոնրի կոմերցիոն դերի և որպես ազգային ինքնության բաղադրիչի ակտիվացումն ու վերաբժնորումը: Եվ քանի որ արդի ժամանակներում թոնրի նկատմամբ եղած ավանդական պատկերացումներն ու հավատալիքները դադարել են կենցաղավարելուց և ներկայիս բանասացներն էլ դրանք կամ չեն հիշում կամ համարում են «պառավական բաներ», ուստի սա նաև փորձ է մոռացության փոշուց փրկելու և հնարավոր չափով համակողմանիորեն ներկայացնելու թոնրի մշակույթն իր բազմաշերտությամբ:

Ուսումնասիրությունը կատարել ենք պատմահամեմատական և բանագիտական զուգադրական մեթոդներով:

Թոնրի ծիսապաշտամունքային գործառույթի հենքը. հավատալիքներ և պատկերացումներ: Թոնիրը (բարբառներում հանդիպում է թունդիր, թորոն, թոնդուր, թունտիր և այլ ձևերով [Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. II, 1973, 196]) և օջախը [Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. IV, 787-788] հայոց լեզվամտածողության մեջ կրակարանի հոմանիշներ են, թեև իրենց կառուցվածքով տարբերվում են միմյանցից [Պետրոսյան, 2001, 347-356]: Այս երկուսը հաճախ նույնականացվում են և կապվում ընտանիքի ու նրա հարատևության հետ, որտեղից էլ ձևավորվել են «օջախդ շեն մնա», «հայրական օջախ», «օջախի զավակ» և նման այլ բանաձևումներ:

Թոնիրը (օջախը), ինչպես վերը նշեցինք, հայոց մեջ սերտորեն կապված է եղել կրակի և նախնիների պաշտամունքի հետ, ինչն էլ ձևավորել է կրոնաառասպելաբանական մտածողության ուրույն միջավայր և ծնունդ տվել բազմապիսի պատկերացումների, ուր կրակը հանդես է գալիս իր բնույթի գրեթե բոլոր ստորոգելիներով¹: Կրակի հանդեպ երկյուղած վերաբերմունքի կենցաղավարությունը պայմանավորված է նաև նրանով, որ քրիստոնեությունը չմերժեց կրակի աստվածային լինելու պատկերացումը, այլ վերաձևակերպեց՝ կրակն ու լույսը դարձնելով Աստծո գործության բաղադրյալներ. «Եթե (Աստված) միայն ոչնչացնող կրակ լիներ, ինչպե՞ս կենարար լույս կկոչվեր. չե՞ որ հայտնի է, թե որտեղ նրա սաստկությունն է պետք, այնտեղ կրակ է կոչվում, իսկ որտեղ քաղցրությունը, այնտեղ կենարար լույս (է կոչվում), այսինքն՝ կրակից ու լույսից վեր է: Իր

¹ Կրակը հայոց պատկերացումներում հանդես է գալիս և՛ ոչնչացնող էությամբ, և՛ որպես լույս, և՛ որպես չարխափան, և՛ որպես բժշկող գործություն:

վրա ուրիշ շատ անուններ էլ է վերցնում՝ զանազան հոգացողությունների համար» [Եզնիկ Կողբացի, 1970, 74-75]:

Հայոց հավատալիքներում կրակն ու ջուրը քույր ու եղբայր են՝ կրակը քույրն է, ջուրը՝ եղբայրը [Ալիշան, 2002, 30, 31], որոնք, իբրև միմյանցից անբաժան տարրեր [Եզնիկ Կողբացի, 1970, 33], հանդես են գալիս աղբյուրի և լույսի համատեղությամբ, ուր հուրը կամ կրակը հանդես է գալիս իր մյուս՝ լուսատուի գործառնությամբ, որը հովանի է լինում աղբյուրին՝ նրան տալով բուժական հատկություն: Այդ աղբյուրները կոչվում են Լուսաղբյուրներ և հայտնի սրբատեղիներ են՝ օժտված այս կամ այն հիվանդությունը բուժելու գործությամբ, որը հաստատում է ավանդազրույցը. աղբյուրի ջրով լվացված կույրը վերագտնում է տեսողությունը, որի պատճառով անվանվում է Լուսաղբյուր [Ղանալանյան, 1969, 95 (3 Ա-Ը)]:

Լույսի խաղաղության ու հավիտենականության գործառնության դրսևորումը հանդիպում ենք օրինանքներում և բարեմաղթանքներում՝ «Լույսի բաժին դառնաս», «Լուս ճիրի (ծորա) վրը քու հոր, լուսու փայ էղնի» և այլն:

Կրակն [Ալիշան, 2002, 29-35] ու ջուրը, իբրև միմյանցից անբաժան տարրեր, հանդես են գալիս նաև թոնրի շուրջ ձևավորված պատկերացումներում, որի դրսևորումները գտնում ենք հայկական ավանդազրույցներում. թոնիրն այն սրբազան վայրն է, ուր իր փրկությունն է գտնում ամուսնու անմիտ վրեժից խուսափող կինը՝ դառնալով ձուկ կամ գորտ, իսկ թոնիրը վերածվում է ջրհորի [Ղանալանյան, 1969, 95 (252), 98 (263), 106 (289); Սյունիքի բանահյուսությունը, 2020, 121]: Մեղրագետի մասին էլ պատմվում է, թե երեցկինը աղքատին համբուրելու համար ամուսնու պահանջով նետվում է վառվող թոնիրը, որն իսկույն լցվում է քաղցրահամ ջրով և դառնում գետ, իսկ հավատարիմ կինը կերպափոխվում է ձկան: Ջրով լցված թոնիրը դառնում է Մեղրագետի ակը, որի մեջ ապրում է ձկան վերափոխված երեցկինը [Ղանալանյան, 1969, 88-89 (233 Ա)]:

Կրակը, որպես աստվածային զայրության դրսևորում, և ջուրը, որպես ոչնչացնող զայրության հետևանք, ժողովուրդը կրկին կապել է թոնրի հետ. չխոսականության արգելքը անտեսել է երիտասարդ հարսը, որի պատճառով թոնրից սկսել է ջուր բխել՝ դառնալով աշխարհակործան ջրհեղեղի պատճառ [Լալայան, 1903, 125-126 (տողատակ); Ղանալանյան, 1969, 333-334 (789 Դ); Էսթեր Խենյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 25, 2008, 265]:

Կրակի և ջրի երկմիասնությունը արտահայտված է նաև չար աչքի դեմ արվող ժողովրդական աղոթքներում.

Չար աչքն՝ ի չար փուշ,

Չար փուշն՝ ի կրակ,

Չար կրակն՝ ի ծով,

Ծովն յանհատակ...[Բենսե, ՀԱԲ, հ. 3, 1972, 130]:

Հայոց մեջ կրակի վրա թքելը մեղք է համարվել. կարծել են, որ թքողի բերանում վերքեր կառաջանան, այդ պատճառով կանայք հաց կամ բաղարջ թխելիս կապել են իրենց բերանները, որ պատահմամբ թքի կաթիլներ չցայտեն իրենց բերաններից [Լալայան, 2024, 363]:

Ժողովրդական պատկերացումներն ու հավատալիքները հիմք են տալիս կարծելու, որ թոնրի սրբազնացումը պայմանավորված է ոչ միայն վաղնջական ժամանակներից եկող բնապաշտության, այլև ստորերկրայքի ու այսրաշխարհի սահմանային միջակայքում գտնվելու և մինչև վերերկրայինի սահման հասնելու հետ¹: Կարելի է ասել, որ թոնիրն աղերսվում է կենսացճառային պատկերացումներին, թեև որպես այդպիսին հանդես չի գալիս: Առասպելաբանական պատկերացումների համաձայն՝ այն առավելապես անդրաշխարհն ու այսրաշխարհն իրար կապող յուրատեսակ անցուղի է, ինչպես նաև այլ երկրում ապրող մարդու հետ շփվելու, լուր կամ խոսք փոխանցող գաղտնուղի: Ռշտունքիում, որպեսզի պանդուխտը շուտ վերադառնա, թոնրի սնվածքի ակը բանալով՝ գլուխը մոտեցրել են և կանչել՝ «Աղո՛ւթ, Զմրո՛ւթ, (այսինչին) կանչե՛ գա» [Լալայան, 2024, 363]: Սա, ինչ խոսք, վաղնջական ժամանակներից եկող ստորերկրայքում ապրող և մարդկանց օգնող աներևույթ ոգիների հավատալիքի մնացուկ է, որի արձագանքը աջուց-մաջուցների տեսքով գտնում ենք հայոց հրաշապատում հեքիաթներում: Հերոսը, ամուսնանալով աներևույթների արքայադստեր հետ, կամ «որդեգրվելով» անգավակ ծերունիներին, թագավորի պահանջով աջուց-մաջուցների օգնությամբ ձեռք է բերում այլ աշխարհին վերաբերող իրեր՝ կերակրող սփռոց, կախարդական գորգ և այլն, կամ մի գիշերում կառուցում պալատ, տնկում իր տեսակը չունեցող հրաշագեղ այգի [ՀԱԻ ԱԲԽ, ֆ. FA III, թ. 3844-3891; ֆ. FA III, թ. 1891-1929; ՀԺՀ, հ. XIX, 2023, 206-2015; 222-226 և այլն]:

Թոնրի սրբազնացումը կապվում է նաև նախնիների և տան պահապան ոգու պաշտամունքի հետ: Հայոց Լեոնաշխարհի գրեթե բոլոր ազգագրական շրջաններում հավատում էին, որ նրանք ապրում են թոնրի շուրթին կամ ակի մեջ, որով պայմանավորված՝ բարեպաշտական սովորություն է եղել թոնրի շուրջը և դրա ակը մաքուր պահել: Արճակում Կուղրաթը տան անտեսանելի բարեկամ ոգին էր, որը պատկերացվում էր երիտասարդ խոնարհ հարսի կամ ջանասեր ու ամոթխած աղջկա կերպարանքով: Նա ապրում էր կամ թոնրի ակի մեջ, կամ այլուրի ամբարի ետևում կամ մթերանոցի որևէ անկյունում: Տանտիկիները հաց թխելիս Կուղրաթի բաժինը՝ փոքրիկ կուտի² կտոր, թողնում էին թոնրի ակի մեջ: Կուղրաթը ոչինչ չէր ուտում, այլ բավարարվում էր այդ կուտից հոտ քաշելով [Սերինե Ավագյան, ՀԱԲ, հ. 8, 1978, 91]:

¹ Գետնի մեջ եղող տեղադիրքը, որի մեջ վառվում է կրակը (ստորերկրայք, որտեղից բխում է նաև ջուրը), հացաթխման ծխակարգը (այսրաշխարհ) և նրանից բարձրացող ծուխը, որը բարձրանում է երկինք:

² Կուտ է կոչվում թոնրի պատից պոկված, կրակի մեջ ընկած կիսաայրված հացը:

Թոնրի ծիսական միջավայրը: Պսակ և կնունք: Եկեղեցի չունեցող գյուղերում թոնիրը «փոխարինել» է քրիստոնեական տաճարին, որի վրա կատարվել են և՛ կնունքներ, և՛ պսակադրություններ:

Հայկական Լեոնաշխարհի ազգագրական շրջանների կենցաղի ու սովորույթների նկարագրություններում հիշատակվում է, որ գյուղերում եղել են մեկ-երկու օջախներ, որոնք սրբատեղի են համարվել և եղել են ուխտատեղի, իսկ եկեղեցի չունեցող գյուղերում պսակն ու կնունքն այդ օջախների վրա է կատարվել [Լալայան, ԱՀ, 1903, 184; Լալայան, 2021, 76; 390; 538; Լալայան, 2024, 363]: Դրանք սովորական օջախներ են եղել, որոնք սովորականի պես գործածվել են, հետո մոմ և խնկաման են դրել, որ ուխտավորը կարողանար իր ծեսը կատարել [Լալայան, ԱՀ, 1897, 115-116]:

Թոնրի պսակ կատարել են նաև օրինավոր ամուսնության թույլտվություն չստանալու, ամուսնացող զույգի ազգակցական պորտերի մոտիկության, տարիքի չհասության, զույգից մեկի այրի լինելու դեպքերում [Լալայան, 2021, 165; Լիսիցյան, 1969, 194; Նահապետյան, Ղարիբյան, 2006, 129]: Թոնրի վրա պսակը կատարել է քահանան. թոնրի շուրջը մոմեր են վառել, հարս ու փեսին կանգնեցրել երկու կողմերում, քահանան կատարել է պսակի խորհուրդը, որից հետո նորապսակները ծնկել, համբուրել են թոնրի շուրթը և հետ-հետ գնալով՝ հեռացել, որպեսզի թիկունք դարձնելով չանպատվեն թոնիրը:

Եկեղեցի ունեցող գյուղերում նորապսակ զույգը եկեղեցուց գնացել է թագվորի տուն, տանը քահանան, շարականներ երգելով, յոթ անգամ պտտվել է թոնրի շուրջը, որին հետևել են նորապսակները, այնուհետև շարունակել հարսանեկան խնջույքը [Լալայան, 2024, 495]:

Չավախքի հայ բոշաների մոտ հարսանեկան ծեսում եղել է հետևյալ սովորությունը՝ պսակից հետո տուն վերադառնալով՝ փեսան մտել է թոնիրը, իսկ հարսը պարել թոնրան շրթին ու երգել, մինչև փեսան դուրս գա թոնրից.

Կերթամ մուրամ, բերեմ պահեմ

Հավի դոշով, փրփուր լոշով.

Ե՛լ, ե՛լ, մատաղ ըլլիմ քեզի,

Ե՛լ ատ թոնրեն, մեմ՝ դուս արի:

Այս ծիսական սովորույթն ունի իր հիմքը. ըստ բոշաների մեջ տարածված ավանդության՝ շատ հին ժամանակներում Կիրիսկեղոս անունով մի բոշա մարդ, չկարողանալով պահել իր գերդաստանը, հուսահատությունից գնացել մտել է թոնիրը, որ սովից մեռնի, սակայն կինը վերոնշյալ երգը երգելով՝ համոզել, դուրս է հանել թոնրից [Լալայան, ԱՀ, 1895, 178-179], որտեղից էլ սկիզբ է առել հարսանեկան այս արարողակարգը: Սա կարծես թե տանտիկին դարձող բոշա նորահարսի պարտականությունների օրինականացման ծես է. ամուսինը պետք է տանը մնա, մաղ,

քթոց, բաթաթ (հացառ) ու փոկ գործի, իսկ կինը առանց բողոքելու գյուղեգյուղ ման գալով՝ վաճառի¹:

Թոնրի վրա կատարվող մկրտությունն [Աբեղյան, 1975, 61] անխաթար պահպանվել է «Սասնա ծռերում», որտեղ օտարության մեջ գտնվող Ծովինարի զույգ զավակներին՝ Սանասարին ու Բաղդասարին քահանան կնքում ու անվանադրում է թոնրի վրա՝ ցուցելով նրանց հայեցիությունը՝ միաժամանակ հաստատելով Ծովինարի կուսածնությունը [Սասնա ծռեր, հ. Ա, 1936, 129]: Այսինքն՝ Հայոց մեջ թոնիրն ընկալվել է «սրբազան կառույց», որը կարելի է տեղափոխել՝ օտարության մեջ ծառայեցնելով ծիսապաշտամունքային կարիքներին: Սա, կարծում ենք, վաղնջական ժամանակներից եկող սովորույթ է, որը հաստատվում է հնագիտական նյութերով [Արտակ Գնունի, Պատմաբանասիրական հանդես, 2004, 1, 203-223; Լարիսա Եգանյան, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. [Գիտական աշխատություններ](#), 16, 2013, 56-62]:

Թոնրի ծիսական միջավայրն իր մեջ ներառում է նաև գուշակություններ, բժշկություն, բարեպաշտական ու հմայական ծեսեր, հավատալիքներ, իսկ հայ բանավոր ավանդության մեջ պահպանվել են թոնրի շուրջ ստեղծված աղոթքներ, երգումներ, հանելուկներ, օրհնանք-անեծքներ, առած-ասացվածքներ, այն հիշատակվում է նաև հարսանեկան ծիսական երգերում, որոնց մասին կխոսենք մեր հաջորդ ուսումնասիրություններում:

Ամփոփում: Ամփոփելով նկատենք, որ թոնրի (օջախի) շուրջ ձևավորված ժողովրդական պատկերացումներն ու հավատալիքներն ունեն կրոնապաշտամունքային խոր արմատներ, որոնք գալիս են վաղնջական ժամանակներից ու հասնում մինչև XX դարի կեսերը: Թեև արդի հայկական առօրյայում թոնրի նկատմամբ ունեցած հավատալիքներն ու ավանդական պատկերացումները կորցրել են իրենց երբեմնի կենցաղավարությունը, բայց պահպանվել է թոնրին մատուցվող հարգանքը և խնամքը՝ որպես «հնից եկող սովորություն»:

Գրականության ցանկ

Abeghyan, 1975 - Abeghyan M., Yerker, h. E, HSSH GA hrat., 1975, 603 ej: **(in Armenian)**

Alishan, 2002 - Alishan GH., Hin havatk'y kam het'anosakan krony (grakan arevelahayereni veratsets' A.G. Barseghyany), hrat. «Hrazdan» SPY, 2002, 295 ej: **(in Armenian)**

Acharryan, 1973 – Acharryan H., Hayeren armatakan barraran, h. II, Yerevani hamalsarani hrat., 1973, 687 ej: **(in Armenian)**

¹ Այս կենսակերպը բռնաները կապել են իրենց ծագումնաբանական ավանդության հետ, որով էլ բացատրել են իրենց նմանօրինակ կյանքը [Երվանդ Լալայան, ԱՀ, գ. Ա, 1895, 178]:

- Avagyan, 1978** - Avagyan S., Archak, Hay azgagrut'yun yev banahyusut'yun, h. 8, HSSH GA hrat., 1978, 186 ej: **(in Armenian)**
- Bense 1972** – Bense (Sahak Movsisyan), Bulanykh, Hay azgagrut'yun yev banahyusut'yun, h. 3, HSSH GA hrat., 1972, 182 ej: **(in Armenian)**
- Gnuni, 2004** - Gnuni A., SHengavit'yan mshakuyt'i ojakhnery yev drants' hamalirnery, Patmabanasirakan handes, №1, 2004, ej 203-223: **(in Armenian)**
- Yeganyan, 2013** - Yeganyan L., mets Sepasari ojaxh-zoharanner, HH GAA Shiraki hayagitakan hetazotut'yunneri kentron. Gitakan ashkhatut'yunner, h. 16, 2013, ej 56-62: **(in Armenian)**
- Yeznik Koghbats'i, 1970** - Yeznik Koghbats'i, Yeghts aghandots', «Hayastan» hrat., 1970, 254 ej: **(in Armenian)**
- Zhamanakakits' hayots' lezvi bats'atrakan barraran, 1980** - Zhamanakakits' hayots' lezvi bats'atrakan barraran, h. IV, HSSH GA hrat., 1980, 828 ej: **(in Armenian)**
- Lalayan, 1895** - Lalayan Ye., Javakhk', Azgagrakan handes., g. A, Shushi, 1895, ej 117-378: **(in Armenian)**
- Lalayan, 1897** - Lalayan Ye., Varanda, Azgagrakan handes, g. B, T'iflis, 1897, ej 5-244: **(in Armenian)**
- Lalayan, 1903** - Lalayan, Ye., Borch'alui gavarr, Azgagrakan handes., g. X, T'iflis, 1903, 113-268: **(in Armenian)**
- Lalayan, 2021** - Lalayan Ye., Yerker, h. 4, HAI hrat., 2021, 692 ej: Lalayan, 2024 - Lalayan Ye., Yerker, h. 5, HAI hrat., 2024, 592 ej: **(in Armenian)**
- Lisits'yan, 1969** – Lisits'yan S., Zangezuri hayery, HSSH GA hrat., 1969, 334ej + 130 nkar: **(in Armenian)**
- KHemch'yan, 2008** - KHemch'yan E., Ijevan (Dzorop'vor), Hay azgagrut'yun yev banahyusut'yun, h. 25, HH GAA «Gitut'yun» hrat., 2008, 490 ej: **(in Armenian)**
- HAI ARKH** – HAI ARKH, Ye. Lalayani khmbarshavi fond FA III, t'. 3844-3891; FA III, t'. 1891-1929: **(in Armenian)**
- HZHH, 2023** - HZHH, h. XIX (Kazmogh, T'. L. Hayrapetyan), HAI hrat., 2023, 736 ej: **(in Armenian)**
- Ghanalanyan, 1969** - Ghanalanyan A., Avandapatum, HSSH GA hrat., 1969, 530 ej + 33 lusankar: **(in Armenian)**
- MM, 973** - MM, Mashtots', DZerr. 973, 265 B: **(in Armenian)**
- MM, 5823** - MM, Mashtots', DZerr. 5823, 171B-176B: **(in Armenian)**
- Nahapetyan, Gharibyan, 2006** – Nahapetyan RR., Gharibyan I., Gitelik' yev khorhrdanish, havatalik' yev sovoruyt' (mijazgayin arrajin gitazhoghovi hodvatsneri zhoghovatsu), Yerevan, «Gitut'yun» hrat., 2006, ej 124 -140: **(in Armenian)**
- Petrosyan, 2001** - Petrosyan H., Hayots' srbery yev srbavayrery, Yerevan, «Hayastan» hrat., 2001, ej 347-356: **(in Armenian)**
- Syunik'i Banahyusut'yuny, 2020** - Syunik'i Banahyusut'yuny (kazmoghner, T'. Hayrapetyan, G. Melik'yan, S. Arrak'elyan, A. Kirakosyan), Yerevan, HAI hrat., 2020, 384 ej: **(in Armenian)**
- K'nar mshets'wots' yev vanets'wots', 1874** - K'nar mshets'wots' yev vanets'wots' (minch'ev ayzhm ch'hratarakuats yerger) (zhoghoveats' Aristakes vrd. Sedrakean), i Vagharshapat, i tparani srboy Kat'ughike Ejmiatsni, RRYIG–1874, 46 ej: **(in Armenian)**